Տնտեսական զարգացման և հետազոտությունների կենտրոն

ՄԱԿՐՈՏՆՏԵՍԱԿԱՆ ՓՈԽԿԱՊՎԱԾՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ. ՖԻՆԱՆՍԱԿԱՆ ՀՈՍՔԵՐԻ ԱՂՅՈՒՍԱԿԸ

Տնտեսական զարգացման և հետազոտությունների կենտրոն

Ելենա Մանուկյան

Երևան - 2010

ՀՀ Էկոնոմիկայի նախարարություն

Գերմանական տեխնիկական համագործակցության ընկերություն

Ֆինանսական հոսքերի աղյուսակը (ՖՀԱ)

- **Ֆինանսական հոսքերի աղյուսակը** կարևոր է քանի որ այն.

✓ համակարգված կերպով ներկայացնում է փոխադարձ կապերը տնտեսության տարբեր հատվածների միջև (ներառյալ արտաքին աշխարհը),

✓ օգնում է բացահայտել հատվածների ցուցանիշների միջև հնարավոր անհամապատասխանությունները (շեղումները),

✓ ցույց է տալիս, թե տնտեսության որ հատվածներն ունեն ընդհանուր դիֆիցիտ, իսկ որոնք՝ հավելուրդ, օգնում է հասկանալ այդ դեֆիցիտի/հավելուրդի առաջացման աղբյուրներն ու պատճառները, դեֆիցիտի ֆինանսավորման և հավելուրդի օգտագործման ուղղությունները,

✓ օգտակար է քաղաքականությունների հնարավոր սցենարների սիմուլյացիայի (խաղարկման) ժամանակ:

- Դիտարկենք ՖՀԱ-ի պարզագույն տարբերակը.

	Ներքին տնտ.	Այլ աշխարհ	Ստուգում (տողերով)
Ոչ ֆինանսական գործարքներ			
Արտահանում	+100	-100	0
Ներմուծում	-300	+300	0
Ռեսուրսների պահանջ (ճեղք)	-200	+200	0
Ֆինանսական գործարքներ			
Արտաքին փոխատվություններ	+200	-200	0
Ստուգում (սյուներով)	0	0	0

ՖՀԱ-ի պարզագույն տարբերակը (2)

- Յուրաքանչյուր հատվածի համար իրական և ֆինանսական գործարքների գումարը 0 է:

  Դա նշանակում է, որ փաստացի յուրաքանչյուր հատվածի ոչ ֆինանսական դեֆիցիտը (հավելուրդը) ամբողջությամբ ծածկվում է (օգտագործվում):

- «Այլ աշխարհ» հատվածի գործարքները ներկայացված են արտերկրի տեսանկյունից, այլ ոչ թե ներքին տնտեսության:

  Այս իմաստով մեր կողմից ներմուծումը (-300), արտերկրի համար արտահանում է հանդիսանում (+300):

ՖՀԱ-ի պարզագույն տարբերակը (3)

- Ֆինանսական գործարքների նշանները որոշվում են հետևյալ կերպ.

✓ գործարքը գրանցվում է «-» նշանով, եթե այդ հատվածում այն հանգեցնում է ակտիվների աճի կամ պարտավորությունների նվազմանը,

✓ գործարքը գրանցվում է «+» նշանով, եթե այդ հատվածում այն հանգեցնում է ակտիվների նվազմանը կամ պարտավորությունների աճի:

Այս իմաստով երկրի արտաքին փոխատվությունը (արտաքին ֆինանսական պարտավորությունների աճը) արձանագրվել է որպես +200 միավոր: Արտերկրի համար այս գործարքը գրանցվում է, որպես -200 միավորի զուտ վարկավորում (ֆինանսական ակտիվների աճ):

	Աճ	Նվազում
Ակտիվներ	-	+
Պարտավորություններ	+	-

ՖՀԱ-ի պարզագույն տարբերակը (4)

- Ֆինանսական հոսքերի աղյուսակում յուրաքանչյուր գործարք կրկնակի է գրանցվում. մեկը՝ որպես իրական, մյուսը որպես ուղեկցող ֆինանսական գործարք:
- Կրկնագի գրանցումը վերաբերում է գործարքի մեջ ներգրավված հատվածներից յուրաքանչյուրին. և՛ ներքին տնտեսությանը, և՛ արտերկրին:
- «Արտաքին աշխարհ» հատվածի դեֆիցիտը նշանակում է, որ ներքին տնտեսությունն ունի հավելուրդ:

ՖՀԱ-ի ընդլայնված տարբերակը. գրանցման սկզբունքները

- Ֆինանսական հոսքերի ընդլայնված աղյուսակներում ներքին տնտեսության կազմում առանձնացվում են պետական, մասնավոր և բանկային հատվածները:
- **Ընդգրկվածությունը**. ամեն գործարքին մասնակցում է երկու հատված: Միևնույն հատվածին վերաբերող գործարքները ցույց չեն տրվում: (Ինչո՞ւ)
- **Վիճակագրական աղբյուրը.** նույնիսկ եթե որևէ գործարքի համար տվյալները, աղբյուրից աղբյուր, փոփոխվում են, աղբյուրը պետք է լինի միակը: Նման աղբյուրներից են, օրինակ.
  - GFS (պետական ֆինանսների վիճակագրություն),
  - BOP (վճարային հաշվեկշռի վիճակագրություն),
  - MBS (մոնետար և բանկային վիճակագրություն):

`

ՖՀԱ-ի ընդլայնված տարբերակը. գրանցման սկզբունքները (2)

- **Բանկային հատվածը**. բանկային հատվածի ոչ ֆինանսական հաշվեկշիռն ընդունվում է զրո, կամ այլ կերպ, $S_b - I_b = 0$: Այդ հատվածի ոչ ֆինանսական գործարքները ոչ բացահայտ կերպով ընդգրկված են մասնավոր հատվածի հաշիվներում:

- **Արտաքին հատվածը.** ելնելով նրանից, որ այս հատվածի գործարքները դիտարկվում են արտերկրի տեսանկյունից՝ մեր երկրի համար ընթացիկ հաշվի դեֆիցիտը (+ CAB)՝ արտաքին հաշվի հավելուրդն է (- CAB) արտերկրի համար:

Ֆինանսական հոսքերի աղյուսակի սխեմատիկ կառուցվածքը

- Ֆինանսական հոսքերի աղյուսակի սյունները՝ տնտեսության հատվածներն են, իսկ տողերը՝ գործարքներն այդ հատվածների միջև:
- Աղյուսակն ունի 3 հիմնական բաժին. ոչ ֆինանսական գործարքներ, S – I հաշվեկշիռներ և ֆինանսական գործարքներ.
  - ոչ ֆինանսական գործարքներից են ապրանքներին, ծառայություններին, եկամտին, տրանսֆերտներին վերաբերողները:
  - ֆինանսականների մեջ առանձնացվում են փոխատվությունը կամ վարկավորումը:

Ֆինանսական հոսքերի աղյուսակի սխեմատիկ կառուցվածքը (2)

	Ընդ. տնտ.	Ներքին տնտ.	Պետ. հատվ.	Մասնավ. հատվ.	Բանկային համակ.	Արտաք. աշխ.	Ստուգ. (տողեր)
	(1)	(2)	(3)	(4)	(5)	(6)	(7)
ՀԱՏԵ	-GNDI	**+GNDI**	GNDIg	GNDIp			**0**
Վերջնական սպառում	C	**-C**	-Cg	-Cp			**0**
Համախառն խնայողություններ	I	**-I**	-Ig	-Ip			**0**
Արտահանում (ապ. և ծառ.)	X					-X	**0**
Ներմուծում (ապ. և ծառ.)	-M					M	**0**
Զուտ գործոնային եկամուտ	Yf					-Yf	**0**
Զուտ տրանսֆերտներ	TRf					-TRf	**0**
Ոչ ֆինանսական հաշվեկշիռ	**0**	**S - I**	**Sg - Ig**	**Sp - Ip**	**0**	**-CAB**	**0**
Արտաքին ֆինանսավորում							
Ոչ մոնետար							
Ուղղակի ներդրումներ	0	**FDI**		FDI		-FDI	**0**
Զուտ արտաքին փոխատվություն	0	**NFB**	NFBg	NFBp		-NFB	**0**
Մոնետար							
Զուտ արտաքին ակտիվների փոփոխություն	0	**-△NFA**			-△NFA	△NFA	**0**
Ներքին ֆինանսավորում							
Մոնետար							
Ներքին վարկավորում	0	**0**	△NDCg	△NDCp	-△NDC		**0**
Դրամական զանգված	0	**0**		-△M2	△M2		**0**
Ոչ մոնետար							
Ոչ բանկային	0	**0**	NB	-NB			**0**
Զուտ սխալներ և բացթողումներ	0	**-△OINd**	-△OINg	-△OINp	-△OINb	△OINf	**0**
Ստուգում (սյուներ)	**0**	**0**	**0**	**0**	**0**	**0**	**0**

Հիմնական հատվածները. ոչ ֆինանսական հաշվեկշիռը և դրա ֆինանսավորումը

- **Տնտեսություն**

Խնայողություններ - ներդրումներ ճեղք $S - I = CAB$ կամ $-S + I + CAB = 0$

ՀԱՏԵ $-GNDI + C + I + X - M + Yf + TRf = 0$ (1)

- **Պետություն**

Խնայողություններ - ներդրումներ ճեղք $Sg - Ig = GNDIg - Cg - Ig$ (2)

Ֆինանսավորում $Fg = NFBg + \triangle NDCg + NB$ (3)

$(Sg - Ig) + Fg = 0$ կամ

$(Sg - Ig) + NFBg + \triangle NDCg + NB = 0$

Հիմնական հատվածները. ոչ ֆինանսական հաշվեկշիռը և դրա ֆինանսավորումը (2)

- **Մասնավոր հատված**

Խնայողություններ - ներդրումներ ճեղք $Sp – Ip = GNDIp – Cp – Ip$ (4)

Ֆինանսավորում $Fp = FDI + NFBp + \triangle NDCp - \triangle M2 – NB$ (5)

$(Sp – Ip) + Fp = 0$ կամ

$(Sp – Ip) + FDI + NFBp + \triangle NDCp - \triangle M2 – NB = 0$

- **Բանկային հատված**

Խնայողություններ - ներդրումներ ճեղք $Sb – Ib = 0$

Դրամավարկային նույնություն $\triangle M2 = \triangle NFA + \triangle NDC + \triangle OINb$ կամ

Ճեղքի ֆինանսավորում $\triangle M2 - \triangle NFA - \triangle NDC - \triangle OINb \equiv 0$ (6)

- **Արտաքին հատված (արտերկրի տեսանկյունից)**

Խնայողություններ - ներդրումներ ճեղք $- CAB = - X + M – Yf - TRf$ (7)

Ֆինանսավորում $- Ff = - FDI – NFB + \triangle NFA$

Վճարային հաշվեկշռի նույնություն $CAB + Ff \equiv 0$ (8)

$- CAB – FDI – NFB + \triangle NFA - \triangle OINf \equiv 0$